



«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՉ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
“London Business Group” JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՌԻԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հուլիսի Կամուրջ» Հաշմանդամություն Ունեցող Երեխաների և Երիտասարդների Իրավունքների Պաշտպանության Հասարակական Կազմակերպության Գեկավարությանը և Անդամներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հուլիսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կողմից հանրային միջոցներից ֆինանսավորման մասով կատարված ծախսերի վերաբերյալ 01.01.2019-31.12.2019թթ. ժամանակաշրջանի (այսուհետ՝ Հաշվետու Ժամանակաշրջան) Հատուկ Նպատակի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են հանրային միջոցներից ֆինանսավորման մասով Հաշվետու Ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի, ինչպես նաև դրամական հոսքերի հաշվետվությունները և բացատրական այլ նյութեր:

Մեր կարծիքով, հանրային միջոցներից ֆինանսավորման մասով 01.01.2019-31.12.2019թթ. ժամանակաշրջանի համար կազմված Հատուկ Նպատակի ֆինանսական հաշվետվությունները (այսուհետ՝ Ֆինանսական Հաշվետվություններ) տալիս են հանրային միջոցների ստացման և օգտագործման վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Հատուկ Նպատակի ֆինանսական հաշվետվությունների ծախսերի հաշվառման վարման սկզբունքների և էական առումներով համապատասխանում են կնքված պայմանագրերի պահանջներին:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրի (ՀԷՍՄ կանոնագիր) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքները լուսաբանող պարագրաֆ

Հաշվապահական հաշվառման հիմքը և հաշվետվությունների օգտագործման սահմանափակումները

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Հատուկ Նպատակով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար հիմք են հանդիսացել այդ միտումով Կազմակերպության մշակված հաշվապահական հաշվառման սկզբունքները: Ուստի ստորև ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հարմար չեն այլ նպատակով կիրառելու համար: Մեր կարծիքը նախատեսված է բացառապես Կազմակերպության և հանրային միջոցներ տրամադրողների համար և այն չպետք է բաշխվի կամ օգտագործվի այլ անձանց կողմից:

Այլ հանգամանք

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում Ֆինանսական Հաշվետվությունների ծանոթագրություն 4.3-ի վրա, որը բացահայտում է հանրային միջոցներից ֆինանսավորված ծրագրերի պայմանագրային և փաստացի իրականացման ժամկետները:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է Հատուկ Նպատակով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Հատուկ Նպատակի ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՉ ՍՊԸ

26 մայիսի, 2020 թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան



Տնօրեն

Տ. Չորյան

